Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2007 թվականի փետրվարի 16-ի №47Ա որոշմամբ

# «Ղ - Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպում իրականացնելու համար 14784.5- 15330.5ՄՀց և 22330.0- 23530.5ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման

# Պայմանները

## (Թույլտվություն N0067, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007թ. փետրվարի 16-ի N47Ա որոշմամբ)

### 1. Սահմանումներ

Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Թույլտվություն ունեցող անձ կամ Լիցենզավորված անձ՝ «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերություն.

Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականությունների որոշակի հատված օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 2. Թույլտվության գործողության ժամկետը

2.1 Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2007 թվականի փետրվարի 16-ից:

2.2 Սույն Թույլտվությունը տրվում է 10 տարի ժամկետով:

## 3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

3.1 Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Երևան քաղաքում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում ռադիոռելեային կապի գծերի շահագործմամբ օգտագործել 14784,5-15330,5ՄՀց և 22330,0-23530,5ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները՝ հետևյալ տեխնիկական պայմաններով՝

ա) ռադիոռելեային կապի գծերի շահագործման ժամկետի սկիզբ՝ մինչև 2007 թվականի հունիսի 1-ը.

բ) ռադիոռելեային կապի գծերի անվանումը, ռադիոռելեային կայանների տեղադրման վայրերը՝

| հ/հ | Ռադիոռելեային կապի գծի անվանումը | Ռադիոռելեային կապի գծի կայանների տեղադրման վայրերը | |
|---|---|---|---|
| | | կայան 1 | կայան 2 |
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | YER_010 - YER_014 | ք.Երևան, Հակոբյան | ք.Երևան, Կոմիտաս |
| 2 | VED_MW - LJN_001 | Արարատի մարզ, ք.Վեդի | Արարատի մարզ, գ.Լանջանիստ |
| 3 | VED_MW -URZ_001 | Արարատի մարզ, ք.Վեդի | Արարատի մարզ, գ.Ուրցաձոր |
| 4 | VSZ_001 - YER_TV | Արագածոտնի մարզ, գ.Ոսկեվազ | ք.Երևան, Հովսեփյան |
| 5 | MO5_001 -  GET_01 | Արմավիրի մարզ, գ.Ակնալիճ | Արմավիրի մարզ, գ.Հայանիստ |
| 6 | ZRV_001 - BUJ_001 | Կոտայքի մարզ, գ.Զորավան | Կոտայքի մարզ, գ.Բուժական |
| 7 | ABO_004 -ABO_002 | Կոտայքի մարզ, ք.Աբովյան | Կոտայքի մարզ, ք.Աբովյան |
| 8 | M04_001 - AMS_001 | Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր | Կոտայքի մարզ, գ.Արամուս |
| 9 | BUR_001 - ART_004 | Արարատի մարզ, գ.Բուրաստան | Արարատի մարզ, ք.Արտաշատ |
| 10 | TAP_001 - VED_MW | Արարատի մարզ, գ.Տափերական | Արարատի մարզ, ք.Վեդի |
| 11 | NRM_001-VED_MW | Արարատի մարզ, գ.Նորամարգ | Արարատի մարզ, ք.Վեդի |
| 12 | VSZ_001 - MO3_002 | Արագածոտնի մարզ,գ.Ոսկեվազ | Արագածոտնի մարզ, գ.Արա Լանջ |
| 13 | MO5_001- HTG_001 | Արմավիրի մարզ, գ.Ակնալիճ | Արմավիրի մարզ, գ.Հայթաղ |
| 14 | HTG_001- BGM_001 | Արմավիրի մարզ, գ.Հայթաղ | Արմավիրի մարզ, գ. Բաղրամյան |
| 15 | MO5_001- ATS_001 | Արմավիրի մարզ, գ.Ակնալիճ | Արմավիրի մարզ, գ.Առատաշեն |
| 16 | HKT_001 - ARM_01 | Արմավիրի մարզ, գ.Սարդարապատ | Արմավիրի մարզ, գ.Արմավիր |
| 17 | SEV_001- M10_001 | Գեղարքունիքի մարզ, ք.Սևան | Գեղարքունիքի մարզ, գ.Ծովազարդ |
| 18 | MO1_005 - KAT_001 | Արագածոտնի մարզ, ք.Թալին | Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր |

| | | | |
|---|---|---|---|
| 19 | SEV_003 – SEV_001 | Գեղարքունիքի մարզ, ք.Սևան | Գեղարքունիքի մարզ, ք.Սևան |
| 20 | MO2_005 - KHC_001 _ | Արարատի մարզ, գ.Ուրցալանջ | Վայոց ձորի մարզ, գ.Խաչիկ |
| 21 | AGH_01 - EGH_003 | Վայոց ձորի մարզ, գ.Աղավնաձոր | Վայոց ձորի մարզ, գ.Գլաձոր |
| 22 | GRN_001- GOT_001 | Կոտայքի մարզ, գ.Գառնի | Կոտայքի մարզ, գ.Գողթ |
| 23 | GOT_001- GGD_001 | Կոտայքի մարզ, գ.Գողթ | Կոտայքի մարզ, Գեղարդ |
| 24 | SHM_001- LMN_001 | Լոռու մարզ, գ.Շահումյան | Լոռու մարզ, գ.Լերմոնտով |
| 25 | M04_003 - SEV_004 | Տավուշի մարզ. գ.Սեմյոնովկա | Գեղարքունիքի մարզ, ք.Սևան |
| 26 | MO1_005 - VKS_001 | Արագածոտնի մարզ, ք.Թալին | Արագածոտնի մարզ, գ.Ոսկեթաս |
| 27 | JRP_001 - M01_006 | Շիրակի մարզ, գ.Ջրափի | Շիրակի մարզ, գ.Լանջիկ |
| 28 | GYU_03 - PNK_001 | Շիրակի մարզ, Պեմզաշեն ավան | Շիրակի մարզ, գ.Փանիկ |
| 29 | HRA_004 - ZVB_001 | Կոտայքի մարզ, ք.Հրազդան | Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր |
| 30 | AGT_001 - ATN_001 | Արագածոտնի մարզ, գ.Արագածավան | Արագածոտնի մարզ, գ.Արտենի |
| 31 | MO3_003- CHQ_001 | Արագածոտնի մարզ, ք.Ապարան | Արագածոտնի մարզ, գ.Չքնաղ |
| 32 | AMA_001 - TSG_001 | Շիրակի մարզ, Ամասիա | Շիրակի մարզ, գ.Ցողամարգ |
| 33 | AMA_001- AGB_001 | Շիրակի մարզ, ք.Ամասիա | Շիրակի մարզ, գ.Զույգաղբյուր |
| 34 | MTS_001 - MO2_009 | Վայոց ձորի մարզ, գ.Մարտիրոս | Վայոց ձորի մարզ, Վայք - Ջերմուկ ճանապարհ |
| 35 | ATN_001 - QAR_001 | Արագածոտնի մարզ, գ.Արտենի | Արմավիրի մարզ, գ.Քարակերտ |
| 36 | GTM_001- BAL_001 | Կոտայքի մարզ, գ.Գետամեջ | Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ |
| 37 | GTM_001- ABO_003 | Կոտայքի մարզ, գ.Գետամեջ | Կոտայքի մարզ, Սարալանջի թաղամաս |
| 38 | MAY_001- GYU_006 | Շիրակի մարզ, գ.Մայիսյան | Շիրակի մարզ, ք.Գյումրի |
| 39 | AZN_001- GYU_003 | Շիրակի մարզ, գ.Ազատան | Շիրակի մարզ, ք.Գյումրի |

| | | | |
|---|---|---|---|
| 40 | VKH_001- AZN_001 | Շիրակի մարզ, գ.Ոսկեհասկ | Շիրակի մարզ, գ.Ազատան |
| 41 | SKV_001 - AZN_001 | Շիրակի մարզ, գ.Շիրակավան | Շիրակի մարզ, գ.Ազատան |
| 42 | M11_002 - NRK_001 | Գեղարքունիքի մարզ, գ.Ծովակ | Գեղարքունիքի մարզ, գ.Նորակերտ |
| 43 | MAY_001- GYU_003 | Շիրակի մարզ, գ.Մայիսյան | Շիրակի մարզ, ք.Գյումրի |
| 44 | MAY_001-KMO_001 | Շիրակի մարզ, գ.Մայիսյան | Շիրակի մարզ, գ.Կամո |
| 45 | GYB_001- MAY_001 | Շիրակի մարզ, գ.Գյուլբուլախ | Շիրակի մարզ, գ.Մայիսյան |
| 46 | KTN_001 – MO3_006 | Լոռու մարզ, գ.Կաթնաղբյուր | Լոռու մարզ, ք.Ստեփանավան |
| 47 | GYU_03 – ATK_002 | Շիրակի մարզ, Պեմզաշեն ավան | Շիրակի մարզ, ք.Արթիկ |
| 48 | MO3_001 - OHN_001 | Արագածոտնի մարզ, գ.Ուշի | Արագածոտնի մարզ, գ.Օհանավան |
| 49 | VSZ_001 – PRP_001 | Արագածոտնի մարզ, գ.Ոսկեվազ | Արագածոտնի մարզ, գ.Պարպի |
| 50 | ORG_001 – VSZ_001 | Արագածոտնի մարզ, գ.Օրգով | Արագածոտնի մարզ, գ.Ոսկեվազ |

գ) ռադիոռելեային կապի գծերի օգտագործման նպատակը՝ բջջային հեռախոսակապի կազմակերպում.

դ) ռադիոռելեային կայանների տեսակը՝ թվային.

զ) հատկացված ռադիոհաճախականությունները (հաղորդման/ընդունման)՝

| h/h | Ռադիոռելեային կապի գծի անվանումը | Հատկացված ռադիոհաճախականությունները (ՄՀց) | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | YER_010 - YER_014 | 23429 | 22421 |
| 2 | VED_MW - LJN_001 | 14833.5 | 15253.5 |
| 3 | VED_MW - URZ_001 | 14805.5 | 15225.5 |
| 4 | VSZ_001 - YER_TV | 14907 | 15327 |
| 5 | MO5_001 - GET_01 | 14795 | 15215 |
| 6 | ZRV_001 - BUJ_001 | 15239.5 | 14819.5 |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | ABO_004 -ABO_002 | 23530.5 | 22522.5 |
| 8 | M04_001 - AMS_001 | 14826.5 | 15246.5 |
| 9 | BUR_001 - ART_004 | 14875.5 | 15295.5 |
| 10 | TAP_001 - VED_MW | 15225.5 | 14805.5 |
| 11 | NRM_001 -VED_MW | 15327 | 14907 |
| 12 | VSZ_001 - MO3_002 | 14823 | 15243 |
| 13 | MO5_001- HTG_001 | 14819.5 | 15239.5 |
| 14 | HTG_001- BGM_001 | 15232.5 | 14812.5 |
| 15 | MO5_001- ATS_001 | 14875.5 | 15295.5 |
| 16 | HKT_001 - ARM_01 | 14826.5 | 15246.5 |
| 17 | SEV_001- M10_001 | 14823 | 15243 |
| 18 | MO1_005 - KAT_001 | 14798.5 | 15218.5 |
| 19 | SEV_003 – SEV_001 | 22487.5 | 23495.5 |
| 20 | MO2_005 - KHC_001 _ | 15232.5 | 14812.5 |
| 21 | AGH_01 - EGH_003 | 14826.5 | 15246.5 |
| 22 | GRN_001- GOT_001 | 15260.5 | 14840.5 |
| 23 | GOT_001 – GGD_001 | 14826.5 | 15246.5 |
| 24 | SHM_001 - LMN_001 | 23523.5 | 22515.5 |
| 25 | M04_003 - SEV_004 | 15330.5 | 14910.5 |
| 26 | MO1_005 - VKS_001 | 14791.5 | 15211.5 |
| 27 | JRP_001 - M01_006 | 14784.5 | 15204.5 |
| 28 | GYU_03 - PNK_001 | 15337.5 | 14917.5 |
| 29 | HRA_004 - ZVB_001 | 15218.5 | 14798.5 |
| 30 | AGT_001 - ATN_001 | 15302.5 | 14882.5 |
| 31 | MO3_003- CHQ_001 | 14784.5 | 15204.5 |
| 32 | AMA_001 - TSG_001 | 15204.5 | 14784.5 |
| 33 | AMA_001 - AGB_001 | 15218.5 | 14798.5 |

| | | | |
|---|---|---|---|
| 34 | MTS_001 - MO2_009 | 14910.5 | 15330.5 |
| 35 | ATN_001 – QAR_001 | 14812.5 | 15232.5 |
| 36 | GTM_001- BAL_001 | 14868.5 | 15288.5 |
| 37 | GTM_001- ABO_003 | 14802 | 15222 |
| 38 | MAY_001- GYU_006 | 15323.5 | 14903.5 |
| 39 | AZN_001- GYU_003 | 15250 | 14830 |
| 40 | VKH_001- AZN_001 | 14833.5 | 15253.5 |
| 41 | SKV_001 - AZN_001 | 14847.5 | 15267.5 |
| 42 | M11_002 - NRK_001 | 15239.5 | 14819.5 |
| 43 | MAY_001- GYU_003 | 15309.5 | 14889.5 |
| 44 | MAY_001- KMO_001 | 15267.5 | 14847.5 |
| 45 | GYB_001 - MAY_001 | 14875.5 | 15295.5 |
| 46 | KTN_001 – MO3_006 | 14847.5 | 15267.5 |
| 47 | GYU_03 – ATK_002 | 15309.5 | 14889.5 |
| 48 | MO3_001 - OHN_001 | 22473.5 | 23481.5 |
| 49 | VSZ_001 – PRP_001 | 14896.5 | 15316.5 |
| 50 | ORG_001 – VSZ_001 | 15330.5 | 14910.5 |

է) ճառագայթման դասը՝ 7M00G7W.

ը) տեղեկատվության հաղորդման արագությունը՝

| հ/հ | Ռադիոռելեային կապի գծի անվանումը | Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲիտ/վ) |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | YER_010 - YER_014 | 8 x 2048 |
| 2 | VED_MW - LJN_001 | 4 x 2048 |
| 3 | VED_MW - URZ_001 | 4 x 2048 |
| 4 | VSZ_001 - YER_TV | 16 x 2048 |
| 5 | MO5_001 - GET_01 | 16 x 2048 |

| | | |
|---|---|---|
| 6 | ZRV_001 - BUJ_001 | 4 x 2048 |
| 7 | ABO_004 -ABO_002 | 4 x 2048 |
| 8 | M04_001 - AMS_001 | 8 x 2048 |
| 9 | BUR_001 - ART_004 | 4 x 2048 |
| 10 | TAP_001 - VED_MW | 4 x 2048 |
| 11 | NRM_001 -VED_MW | 16 x 2048 |
| 12 | VSZ_001 - MO3_002 | 16 x 2048 |
| 13 | MO5_001- HTG_001 | 4 x 2048 |
| 14 | HTG_001- BGM_001 | 4 x 2048 |
| 15 | MO5_001- ATS_001 | 4 x 2048 |
| 16 | HKT_001 - ARM_01 | 4 x 2048 |
| 17 | SEV_001- M10_001 | 16 x 2048 |
| 18 | MO1_005 - KAT_001 | 4 x 2048 |
| 19 | SEV_003 – SEV_001 | 4 x 2048 |
| 20 | MO2_005 - KHC_001 _ | 4 x 2048 |
| 21 | AGH_01 - EGH_003 | 4 x 2048 |
| 22 | GRN_001- GOT_001 | 4 x 2048 |
| 23 | GOT_001 – GGD_001 | 4 x 2048 |
| 24 | SHM_001 - LMN_001 | 4 x 2048 |
| 25 | M04_003 - SEV_004 | 4 x 2048 |
| 26 | MO1_005 - VKS_001 | 4 x 2048 |
| 27 | JRP_001 - M01_006 | 4 x 2048 |
| 28 | GYU_03 - PNK_001 | 4 x 2048 |
| 29 | HRA_004 - ZVB_001 | 4 x 2048 |
| 30 | AGT_001 - ATN_001 | 4 x 2048 |
| 31 | MO3_003- CHQ_001 | 4 x 2048 |

| | | |
|---|---|---|
| 32 | AMA_001 - TSG_001 | 4 x 2048 |
| 33 | AMA_001 - AGB_001 | 4 x 2048 |
| 34 | MTS_001 - MO2_009 | 4 x 2048 |
| 35 | ATN_001 – QAR_001 | 4 x 2048 |
| 36 | GTM_001- BAL_001 | 4 x 2048 |
| 37 | GTM_001- ABO_003 | 8 x 2048 |
| 38 | MAY_001- GYU_006 | 4 x 2048 |
| 39 | AZN_001- GYU_003 | 4 x 2048 |
| 40 | VKH_001- AZN_001 | 4 x 2048 |
| 41 | SKV_001 - AZN_001 | 4 x 2048 |
| 42 | M11_002 - NRK_001 | 4 x 2048 |
| 43 | MAY_001- GYU_003 | 4 x 2048 |
| 44 | MAY_001- KMO_001 | 4 x 2048 |
| 45 | GYB_001 - MAY_001 | 4 x 2048 |
| 46 | KTN_001 – MO3_006 | 4 x 2048 |
| 47 | GYU_03 – ATK_002 | 4 x 2048 |
| 48 | MO3_001 - OHN_001 | 4 x 2048 |
| 49 | VSZ_001 – PRP_001 | 4 x 2048 |
| 50 | ORG_001 – VSZ_001 | 4 x 2048 |

թ) ռադիոհաճախականության կայունությունը՝ ՞ $1 \times 10^{-5}$.

ժ) անտենաների տեսակը, ուժեղացման գործակիցը, դիագրամի ուղղվածության լայնությունը՝

| հ/հ | Ռադիոռելեային կապի գծի անվանումը | Անտենայի տեսակը | | Ուժեղացման գործակիցը (դԲ) | | Դիագրամի ուղղվածության լայնությունը (աստիճան) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | YER_010 - YER_014 | SB 1 - 220 – | SB 1 - 220 – | 34.9 | 34.9 | 0.3 | 0.3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | PR | PR | | | | |
| 2 | VED_MW - LJN_001 | SU 4 – 142 - PR | SU 6 – 142 - PR | 42.5 | 46 | 1.22 | 1.83 |
| 3 | VED_MW - URZ_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 4 | VSZ_001 - YER_TV | SU 4 – 142 - PR | SU 6 – 142 - PR | 42.5 | 46 | 1.22 | 1.83 |
| 5 | MO5_001 - GET_01 | SU 6 – 142 - PR | SU 4 – 142 - PR | 46 | 42.5 | 1.83 | 1.22 |
| 6 | ZRV_001 - BUJ_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 7 | ABO_004 -ABO_002 | SB 1 - 220 – PR | SB 1 - 220 – PR | 34.9 | 34.9 | 0.3 | 0.3 |
| 8 | M04_001 - AMS_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 9 | BUR_001 - ART_004 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 10 | TAP_001 - VED_MW | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 11 | NRM_001 -VED_MW | SU 6 - 142 - PR | SU 6 - 142 - PR | 46 | 46 | 1.83 | 1.83 |
| 12 | VSZ_001 - MO3_002 | SU 4 - 142 – PR | SU 4 - 142 – PR | 42.5 | 42.5 | 1.22 | 1.22 |
| 13 | MO5_001- HTG_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 14 | HTG_001- BGM_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 15 | MO5_001- ATS_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 16 | HKT_001 - ARM_01 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 17 | SEV_001- M10_001 | SB 2 - 142 - PR | SB 2 - 142 - PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 18 | MO1_005 - KAT_001 | SB 2 - 142 - PR | SU 4 - 142 - PR | 37.3 | 42.5 | 0.61 | 1.22 |
| 19 | SEV_003 – SEV_001 | SB 1 – 220 – PR | SB 1 – 220 – PR | 34.9 | 34.9 | 0.3 | 0.3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | MO2_005 - KHC_001 | SU 4 - 142 - PR | SU 6 - 142 - PR | 42.5 | 46 | 1.22 | 1.83 |
| 21 | AGH_01 - EGH_003 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 22 | GRN_001- GOT_001 | SB 1 – 142 – PR | SB 1 – 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 23 | GOT_001 – GGD_001 | SB 1 – 142 – PR | SB 1 – 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 24 | SHM_001 - LMN_001 | SB 2 – 220 – PR | SB 2 – 220 – PR | 40.1 | 40.1 | 0.61 | 0.61 |
| 25 | M04_003 - SEV_004 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 26 | MO1_005 - VKS_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 27 | JRP_001 - M01_006 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 28 | GYU_03 - PNK_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 29 | HRA_004 - ZVB_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 30 | AGT_001 - ATN_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 31 | MO3_003- CHQ_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 32 | AMA_001 - TSG_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 33 | AMA_001 - AGB_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 34 | MTS_001 - MO2_009 | SB 2 - 142 - PR | SB 2 - 142 - PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 35 | ATN_001 – QAR_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 36 | GTM_001- BAL_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 37 | GTM_001- ABO_003 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | MAY_001- GYU_006 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 39 | AZN_001- GYU_003 | SB 2 - 142 - PR | SB 2 - 142 - PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 40 | VKH_001- AZN_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 41 | SKV_001 - AZN_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 42 | M11_002 - NRK_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 43 | MAY_001- GYU_003 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 44 | MAY_001- KMO_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 45 | GYB_001 - MAY_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 46 | KTN_001 – MO3_006 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |
| 47 | GYU_03 – ATK_002 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 48 | MO3_001 - OHN_001 | SB 2 - 220 – PR | SB 2 - 220 – PR | 40.1 | 40.1 | 0.61 | 0.61 |
| 49 | VSZ_001 – PRP_001 | SB 1 - 142 – PR | SB 1 - 142 – PR | 31.1 | 31.1 | 0.3 | 0.3 |
| 50 | ORG_001 – VSZ_001 | SB 2 - 142 – PR | SB 2 - 142 – PR | 37.3 | 37.3 | 0.61 | 0.61 |

## 4. Ռադիոհաճախականության օգտագործման պայմանները

4.1 Լիցենզավորված անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:

4.2 Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց« օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

4.3 Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոռելեային կապի գծերի շահագործումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:
4.4 Լիցենզավորված անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց առաջ Լիցենզավորված անձը պարտավոր է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:
4.5 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ օգտագործումը:
4.6 Լիցենզավորված անձը պարտավոր է իր տնօրինության կամ տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել քաղաքացիների« սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:
4.7 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ Հանձնաժողովի կողմից կարգավորվող գործունեությանն առնչվող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
4.8 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները և եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրը, Հանձնաժողով ներկայացնել ռադիոհաճախականությունների օգտագործման համար սահմանված ամենամյա վճարի մեկ քառորդի վճարումը հավաստող անդորրագիրը:
4.9 Լիցենզավորված անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա

ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

4.10 Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:

4.11 Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

4.12 Լիցենզավորված անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

4.13 Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

## 5. Գործունեության վերահսկում

5.1 Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

5.2 Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կամ նրա լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը

պարտավոր է լիովին համագործակցել և աջակցել Հանձնաժողովին կամ նրա լիազոր ներկայացուցիչներին:

5.3 Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են Լիցենզավորված անձի ներքին կանոնակարգը, անվտանգության կանոնները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

5.4 Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր ներկայացուցիչների միջոցով, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

## 6. Պատժամիջոցներ

6.1 Լիցենզավորված անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր կողմից սահմանված կարգով կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

ա) տույժերի և տուգանքների կիրառում,

բ) Թույլտվության փոփոխում,

գ) Թույլտվության կասեցում,

դ) Թույլտվության գործողության դադարեցում:

6.2 Լիցենզավորված անձը Թույլտվության 6.1 կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

## 7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում

7.1 Լիցենզավորված անձի ռադիոռելեային կապի գծերի շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

7.2 Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

7.3 Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

## 8. Այլ պայմաններ

8.1 Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոռելեային կապի գծերի շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացնել շինարարական նախագծին, ինչպես նաև տվյալ բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և իրավական ակտերին համապատասխան:

8.2Թույլտվության գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

## 9. Ծանուցում

9.1 Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով: